ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ

Ծրագրի ամսաթերթ

CODE SE

2017 հունվար

Խմբագրական - ՍՁ ոլորտը որպես այդպիսին

Սոցիալական ձեռնարկատիրությունը բավականին արագ զարգացող և դինամիկ ոլորտ է, որը վերջին տասնամյակում գտնվում է դաշտի տեսաբանների և հիմնական կառույցների ուշադրության կիզակետում: Այն սկսում է մեծ դեր խաղալ համաշխարհային մակարդակով առաջընթացի ապահովման, ինչպես նաև կայուն մարդկային, տնտեսական, սոցիալական զարգացման առումով: Սոցիալական ձեռնարկատերերը հանդես են գալիս հետաքրքրական գաղափարներով և նորարարական լուծումներով, որոնք սոցիալական արժեքներ ստեղծելու, մարդկանց կյանքը բարելավելու հնարավորություն են ընձեռում:

Սահմանման և ձևակերպման խնդիր – «սահմանել բայց չսահմանափակել»

Սոցիալական ձեռնարկատիրության վերաբերյալ այսօր դեռևս տարբեր մոտեցումներ գոյություն ունեն՝ սկսած նեղ մասնագիտականից մինչև լայն սահմանումներ: Այսուհանդերձ, եթե որևէ հաջողված ծրագիր որոշակի սոցիալական բարեփոխում է ենթադրում, ընդգրկվում է սոցիալական ձեռնարկատիրության գաղափարի մեջ:

Մեր սահմանումը - «Համայնքային զարգացում սոցիալական ձեռնարկատիրության միջոցով» ծրագրի շրջանակում տարատեսակ սահմանումներ ուսումնասիրելուց հետո, ընդունվեց հետևյալ աշխատանքային սահմանումը. «Սոցիալական ձեռնարկատիրությունը բիզնես գործունեության տեսակ է, որի մոդելի հիմքում դրված է սոցիալական խնդիրների լուծումը և սոցիալական արժեքների ստեղծումը, և որն իր շահույթի մեծ մասը ծառայեցնում է սոցիալական բարեփոխումների իրականացմանը, սոցիալական խնդիրների լուծմանը»:

Սահմանումը հնարավորություն է տալիս ՍՁ ոլորտը տարանջատել հասարակական և բարեգործական գործունեությունից՝ նշելով, որ այն ձեռնարկատիրական գործունեության տեսակ է, որի դեպքում շահույթի ստացման նպատակով պետք է արտադրանք վաճառվի կամ ծառայություններ մատուցվեն: Սակայն սա կարող է փոփոխությունների ենթարկվել: Տվյալ սահմանումը հնարավորություն է տալիս խուսափելու ՍՁ-ի և դասական բիզնեսների կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ծրագրերի տարանջատման դժվարություններից: /շարունակությունը՝ էջ 2/

ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ՝

Խմբագրական
Ծրագրի նորություններ
Հայտարարություններ
ՍՁ հայկական փորձ՝ «ԱՐԿ Հայաստան»
ՍՁ արտերկրի փորձ՝ «Ֆերմենտների դպրոց»
Գրականության ակնարկ
Տեսանյութեր ՍՁ ոլորտի մասին
Ինչ են ասում ոլորտի փորձագետները
ՍՁ աջակից մեխանիզմներ

ՍՁ նորություններին հետևեք մեր ծրագրի ֆեյսբուքյան էջում Community Development Through Social Entrepreneurship

COMMUNITY DEVELOPMENT THROUGH SOCIAL ENTREPRENEURSHIP

ԾՐԱԳՐԻ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կրթական գնահատման փորձագիտական հանդիպում

Հունվարի 27-29 Երևանում մեր ծրագրի թիմը հյուրընկալեց Միգել Անխել Գարսիա Լոպեսին: Նա Եվրամիության և Եվրախորհրդի տարբեր կրթական ծրագրերում աշխատող, դրանց արդյունավետության գնահատմամբ զբաղվող մասնագետ է: Նրա հետ աշխատանքային հանդիպման նպատակը ծրագրի ընդհանուր գնահատման պլանավորումն էր և, առավել հստակ, առցանց բաց դասընթացի գնահատման և բարելավման աշխատանքների կազմակերպման, խնդիրների, գործընթացների, դերակատարների քննարկումն ու սահմանումը: Հանդիպման ընթացքում բազմաթիվ հարցեր բարձրացվեցին կրթական որակի, թիրախավորման, ուսուցանողների, ակնկալվող ուսուցողական արդյունքների վերաբերյալ:

Այս հանդիպումը թիմի համար կրթական պլանավորման և գնահատման անկյունաքար հանդիսացավ: /շարունակությունը էջ 2/

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Новый бизнес» պորտալը ինֆորմացիոն ռեսուրս է, որ պատմում է ՍՁ մասին և միտված է ոլորտի զարգացմանը Ռուսաստանում: Պորտալը առաջարկում է **12 ֆինանսական և կրթական հնարավորություն՝** ՍՁ ոլորտի դերակատարների համար: Մանրամասները սույն հղումով:

«Համայնքային զարգացումը սոցիալական ձեռներեցության միջոցով» ծրագիրը փետրվարի 15-ից հայտարարում է **ՍՁ առցանց բաց դասընթացի** (հղում) ընդունելություն: Դասընթացին դիմելու ու մասնակցելու համար խնդրում ենք անցնել ԱՅՍ հղումով և լրացնել մասնակցության հակիրճ հայտը:

ԵՄ ֆինանսավորմամբ իրականացվող «Աջակցություն ՀՀ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կարողությունների հզորացմանը» ծրագիրը հրավիրում է աշխատանքի դրամաշնորհների, մոնիտորինգի և գնահատման մասնագետների: Մանրամասները սույն հղումով:

Մեկնարկել է ԵՄ **Pilot Regional Development Programme (PRDP) – Shirak** դրամաշնորհային ծրագիր, որը միտված է Շիրակի մարզի հավասարակշռված սոցիալ-տնտեսական զարգացմանը՝ մարզերում աշխատատեղերի ստեղծման և մրցունակության բարձրացման միջոցով: Հայտերն ընդունվում են մինչև ս/թ մարտի 24-ը, Բրյուսելի ժամանակով 14.00: Մանրամասները՝ սույն հղումով:

Փետրվարի 20-ին, Երևանի Կոնգրես հյուրանոցում կկայանան **Կառավարման խորհրդատուների ինստիտուտի (IMC)** կողմից East Invest 2 ծրագրի շրջանակներում բիզնես կառույցների համար կազմակերպված EU4Business Week-ի ամփոփիչ միջոցառումները, որոնք կներառեն ֆոնդհայթայթման, ծրագրերի կառավարման հանդիպումներ, հայկական բիզնեսի դերի թեմայով կլոր սեղան: Մասնակցությունն ազատ է: Մանրամասները սույն հղումով:

սկիզբը՝ էջ 1 - Խմբագրական - ՍՁ ոլորտը որպես այդպիսին

Այստեղ շեշտվում է, որ բիզնես մոդելի մշակման և բիզնեսի հիմնադրման փուլում արդեն իսկ **սոցիալական արժեքի ստացումը և սոցիալապես խոցելի համայնքների և խմբերի խնդիրների լուծումը ինտեգրվում է բիզնես մոդելի գործունեության մակարդակում** (անկախ շահույթից): Տվյալ սահմանումով՝ ստացված շահույթը ի սկզբանե բաշխվում է ըստ համայնքային սոցիալական խնդիրների լուծման առաջնայնության: ՍՁ-ն պետք է ունենա կայուն և շահութաբեր բիզնես մոդել և պարտավորվում է ստացված **շահույթի մեծ մասը տրամադրել սոցիալական բարեփոխումների իրականացման և սոցիալական խնդիրների լուծման նպատակին:**

Ինչու՞ Սոցիալական Ձեռնարկատիրություն - Սոցիալական ձեռնարկատիրական գործունեության հիմնական թիրախ են հանդիսանում խոցելի համայնքներն ու խմբերը, բնակչության անապահով շերտերը և այն տարածաշրջանները, որտեղ ռեսուրսները սակավ են, և որտեղ լրացուցիչ աջակցության կարիք կա: Այստեղ սոցիալական ձեռնարկատիրությունը կարող է կայուն և շարունակական հնարավորություններ և միջոցներ ստեղծել համայնքային խնդիրների լուծման համար, ստեղծել լրացուցիչ աշխատատեղեր, մշակել և մատուցել բազմազան ծառայություններ, իրականացնել ուսուցողական և վերապատրաստման դասընթացներ, ինչպես նաև այլ կարգի գործունեություն ծավալել, որ կհանգեցեն սոցիալական բարեփոխումների:

Մյուս խնդիրը, որի լուծմանը կարող է նպաստել ՍՁ ոլորտի զարգացումը, **քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կայունության և հենց իրենց՝ համայնքների համար կայուն աջակցության ծրագրերի ապահովման ոլորտն է:** Պետք է նշել, որ շատ անգամ հասարակական կազմակերպությունները և հիմնադրամները կախված են լինում պետական կամ միջազգային դոնորական դրամաշնորհային ծրագրերից: ՍՁ ծրագրերի խթանումը, ելնելով համայնքների իրական կարիքներից, նրանց ինքնուրույն կերպով երկարաժամկետ ծրագրեր կազմելու և դրանք իրականացնելու հնարավորություն կտա: Հետևաբար, սոցիալական ձեռնարկատիրության մշակույթի զարգացումը Հայաստանում կարող է առանցքային դեր ունենալ երկրի տնտեսական զարգացման գործում, լուծել սոցիալական խնդիրներ, հատկապես ոչ բարեկեցիկ (խոցելի) տարածաշրջաններում, տեղական համայնքներում, առաջարկել սոցիալ-տնտեսական խնդիրների նորարարական լուծումներ:

ԾՐԱԳՐԻ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կմեկնարկի քրաուդֆանդինգային արշավը

«Համայնքային զարգացումը սոցիալական ձեռներկատիրության միջոցով» ծրագիրը մարտի առաջին օրերին կսկսի համաժողովրդական ֆինանսավորման (քրաուդֆանդինգ) արշավ, որի նպատակն է ծրագրում ներգրավված առնվազն 10 մասնակիցների օգնել հիմնադրելու սոցիալական ձեռնարկություններ: Այժմ արշավը նախապատրաստական փուլում է:

Ծրագրի մասնակիցների և նրանց գաղափարների մասին արդեն իսկ տեսահոլովակ է նկարահանվել, որում մասնակիցները պատմում են համայնքային խնդիրների մասին և ներկայացնում այդ խնդիրների լուծման իրենց տարբերակները: Զուգահեռ մշակվում է նաև արշավի կայքի բովանդակությունը, որ կընդգրկի տեղեկություններ ծրագրի, մասնակիցների, նրանց գաղափարների և արշավի հաջողությունների մասին:

Հայտնի են ծրագրի դրամաշնորհային մրցույթի արդյունքները

Ծրագրի վերջնական հնարավոր շահառուների գնահատումն իրականացավ՝ հայտադիմումների գնահատման (ընդլայնված բիզնես պլան) և 2016թ.-ի նոյեմբերի 26-ին տեղի ունեցած ընտրական Փիթչինգի, վերապատրաստումների, թեկնածուների՝ էլեկտրոնային ուսուցմանը մասնակցելու որակի գնահատման արդյունքների հիման վրա: (Մրցութային հանձնաժողովը բաղկացած էր ոլորտային 9 ներկայացուցիչներից): Ներկա պահին արդեն իսկ մեկնարկել է ենթադրամաշնորհային պայմանագրերի ձևավորման գործընթացը: Այն ավարտին կհասցվի և դրամաշնորհները կտրամադրվեն ծրագրային թիմերի հետ փորձագիտական հանդիպումներից հետո: Ռազմավարությունը կմշակվի փորձագետների կողմից բացահայտված թույլ կողմերի և ռիսկերի վերացման ճանապարհով: Ընտրված շահառուները կստանան խորհրդատվական ծառայությունների ընդգրկուն փաթեթ, որ կնպաստի իրենց սոցիալական ձեռնարկությունների առավել կայուն զարգացմանը:

Ծրագրի մասնակիցների կողմից կային ծրագրային առաջարկներ, որոնք, ըստ փորձագետների, ունեն լավ ներուժ և կարող են ֆինանսավորման պարագայում դրական ազդեցություն ունենալ իրենց համայնքներում: Ծրագրի թիմը նրանց հետ լրացացուցիչ միջոցներ հայթայթելու և ծրագրային բարեփոխումներ իրագործելու ընթացիկ աշխատանքներ կիրականացնի: Կշարունակվեն աշխատանքները շահագրգիռ անձանց հետ:

ՀՀ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԼԱՎ ՓՈՐՁ

ԱՐԿ Հայաստան

«Հավատում ենք, որ Հայաստանի առաքելությունը Դրախտի մասին հիշեցնելն է»:

www.arkarmenia.com

«Արկ Հայաստան» սոցձեռնարկատերեր Արմեն Ղազարյանը և Սիրանույշ Վարդանյանն արդեն ճանաչված են մեր հանրապետության սոցձեռնարկատիրության դաշտն ուսումնասիրողների կողմից: Ընդամենը 3 տարի է, ինչ այս ամուսինները, վերադառնալով արտերկրից, Կապանի Առաջաձոր գյուղում հիմնել են իրենց ձեռնարկությունը և առաջին իսկ օրից առաջնորդվելով իրենց աշխատանքը հասարակության բարեկեցությանը ծառայեցնելու սկզբունքով՝ հասել են նշանակալի հաջողությունների: Վարդանը, շատ երիտասարդ տարիքում կորցրել է տեսողությունը, բայց ոչ միայն չի վհատվել, այլև իր տիկնոջ հետ ուսումնասիրել է Կապանի տարածքային առանձնահատկությունները, որոշել է զրոյից սկսելով՝ էկոտուրիզմը զարգացնել Հայաստանի մի հատվածում, որը բնապահպանական առումով մեղմ ասած՝ բարի համբավ չունի, քանի որ այստեղ է գործում Քաջարանի պղնձամոլիբդենային գործարանն՝ իր բոլոր լավ ու վատ արգասիքներով:

Նրանք իրենց ուշադրությունը կենտրոնացրել են 3 հիմնական ուղղությունների վրա՝ էկոտուրիզմ, այգեգործություն և առողջ ապրելակերպ: Նրանց հետ հետաքրքաշարժ և հարցազրույցը կներկայացնենք հաջորդ համարում:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԵՐԿՐԻ ՓՈՐՁ

Ֆերմերների դպրոց

Այս տարածքային հասարակական կազմակերպության նպատակն է երիտասարդական տարբեր խմբերի մասնագիտական կողմնորոշում տալը: Կազմակերպությունն աշխատում է մանկատան սաների, շրջանավարտների, սահմանափակ կարողություն ունեցող երեխաների (օլիգոֆրենների), գյուղական երիտասարդության, ազատազրկման վայրերից վերադարձած երիտասարդների, գյուղատնտեսական ուսումնական հաստատությունների այն ուսանող-շրջանավարտների հետ, որ աշխատանքի և կացարանի կարիք ունեն:

Ամեն ինչ սկսվեց 1980թ.-ից, երբ Վյաչեսլավ Գորելովը սպորտային կողմնորոշման ուղղությամբ սպորտսմեններ էր պատրաստում: 1994 թ. իր սպորտ դպրոցի և կենտրոնի հիմքի վրա սկսեց զբաղվել իրավախախտումների կանխարգելմամբ: Նույն տեղում ստեղծվեց «Կոյվա» կազմակերպությունը, որտեղ զբաղվում էին դժվար դաստիարակվող երիտասարդության հոծ զանգվածներով: Այս առիթով Գորելովը ներկայացրեց «Տուրիզմն ընդդեմ հանցավորության» նախագիծը, որ հավանություն գտավ քաղաքային ղեկավարության կողմից: 1997 թ. կազմակերպվեց «Իռեն» ճամբարը, որ ձիերով և հեծանիվներով երթուղիներ էր տրամադրում: Այս ճամբարով անցավ մոտ 2000 մարդ: Այնուհետև ճամբարը դարձավ պետական սեփականություն: 1998թ.-ին Գորելովը Պերմի մարզում գրանցվեց որպես անհատ ձեռնարկատեր և Կրիվեց գյուղում եկվոր ձկնորսների համար հյուրատուն կառուցեց: 2000 թ. ճամբարային շրջան անցկացրեց որբ երեխաների հետ: Այդ օրվանից Գորելովն աշխատակցում է «Մեր ապագան» ֆոնդին:

«Ֆերմերների դպրոցն» ի հայտ եկավ 2009-ին: Նրա ծրագրերն իրականացվում են փուլերով: Առաջին փուլում մասնագիտական կողմնորոշման և սոցիալականացման դասընթացներին հրավիրվում են 18-23 տարեկան 30 մասնակիցներ: Երկրորդ փուլում լավագույն արդյունքի հասնողներն անցնում են գյուղատնտեսության հետ կապված տարբեր մասնագիտություններ ձեռք բերելուն: Կազմակերպությունն ունի արտադրանքն իրացնելու և շահույթ ստանալու կայուն խողովակներ:

2012 թ. «Ֆերմերների դպրոցը» արժանացավ «Մեր ապագան» ֆոնդի մրցանակին: Շրջանի ղեկավարությունը ծրագրին հող հատկացրեց, որի վրա կարող էին հիմնավորվել մանկատների շրջանավարտները, ինչպես նաև՝ անտառային հատվածներ, որտեղ նրանք կարող էին տներ կառուցել: Ցավոք, պարզվեց, որ այդ տարածքները ապօրինաբար վաճառված են եղել, և Գորելովը ստիպված եղավ հսկայական տուգանքներ վճարել:

Սակայն նա դրանից հետո էլ չդադարեց հետամուտ լինել «որբ ձեռներեցներ» դաստիարակելու, գործազուրկներին միլիոնատեր դարձնելու, դժվար դաստիարակվող դեռահասներից հասարակական պատասխանատու անձիք ձևավորելու իր գաղափարների իրագործմանը: Նրա՝ «Տուրիզմն ընդդեմ հանցավորության» ծրագրին արդեն մասնակցել են մարզի 36 շրջանների մոտ 5000 «դժվար» դեռահասներ:



Սոցիալական ձեռնարկատիրություն

Գիրքը, որ ձեզ ներկայացվում է, սոցիալական ձեռներեցության այսօր հրապարակում գտնվող ամենալիարժեք, մանրամասն և արդիական ձեռնարկն է: Այն հեղինակել են գործարարությունն ուսումնասիրող և համալսարանական դասախոսների հետ գործնական պարապմունքներ անցկացնող երկու հայտնի գիտնականներ՝ Ջիլ Կոկալը և Թոմաս Լայոնսը: Այս գրքի հեղինակները մեզ համոզում են. «Դուք կարող եք վերափոխել աշխարհը, եթե դա թույլատրեք ինքներդ ձեզ: Դուք կարող եք աշխարհն ավելի արդարամիտ ու մարդասեր դարձնել»:

Ձեռնարկը ճշգրիտ բնորոշումներ է տալիս այն հասկացություններին, որ բնորոշում են սոցիալական ձեռներեցության իմաստը, համակարգում են ժամանակակից սոցիալական գործարարների գիտելիքները, տեսությունը և պրակտիկան, սկզբունքները, ռազմավարությունն ու փորձը:

Ոլորտի տեսանյութեր

[Ինչ է սոցիալական ձեռնարկատիրությունը](#) կարճ տեսանյութը պատմում է ՍՁ հիմնադիրների մասին: Նյութը պատրաստված է Սերբիայի Սոցիալական տնտեսության ցանցի կողմից: Ավելին կարող եք գտնել http://sens.rs/en հղումով: /անգլերեն/

"Что такое социальное предпринимательство?" տեսանյութը պատրաստված է Ռուսաստանի ՍՁ ոլորտի առաջատարներից մեկի՝ "Наше будущее" ֆոնդի կողմից: Ֆոնդի այլ նյութերի հետ կարող եք ծանոթանալ www.nb-fund.ru հղումով: /ռուսերեն/

Հատված «Սոցիալական ձեռնարկատիրություն» գրքից

Ի՞նչն է մոտիվացնում ձեռներեցներին

Ինչո՞ւ են նրանք ձեռնարկում խրթին հարցեր լուծելու գործը: Ի՞նչն է նրանց ստիպում ծանր աշխատանքի գնով կազմակերպություններ ստեղծել, ռիսկի դիմել, ցանցեր ստեղծել և այլն...Արդյո՞ք սա ինչ-որ կապ ունի նրանց նախորդ փորձառության հետ: Գուցե այս աշխատանքը նրանց դաստիարակության արդյո՞ւնք է:

Մեյերի և Նեբոյի կարծիքով սոցձեռնարկատերերի մղումների (մոտիվացիայի) նախադրյալներն են փորձը և կոնտեքստը: Փորձ հասկացությունն այս դեպքում ներառում է գործարարի ստացած դաստիարակությունը, մասնակցությունը տարբեր սոցիալական համագործակցությունների, ընտանիքի, ընկերների, հոգևոր առաջնորդների և ուսուցիչների ազդեցությունը: Փորձն ընդգրկում է նաև անհատական այն հատկանիշները, որոնցով բնորոշվում է տվյալ սոցիալական խնդրի հանդեպ զգայնության աստիճանը: Օրինակ՝ KaBOOM -ի (ոչ առևտրային սոցիալական ձեռնարկություն, որ օգնում է խոցելի տարածաշրջաններում մանկական հրապարակներ կառուցելուն) հիմնադիր Դերիելա Հեմոնդսը գիտելիքի ընկալման դժվարություններ է ունեցել, բացի այդ նա դաստիարակվել է մանկատանը: Պոտենցիալ սոցիալական ձեռներեցները բացարձակապես վստահ են՝ ինչն է ճիշտ, ինչը՝ սխալ: Հաճախ նրանք կարեկցում են անհաջողակներին, ունեն վառ արտահայտված արդարացիության զգացում: Սա նրանց ստիպում է ալտրուիստ լինել: Աշխատանքային փորձը բիզնեսում սոցձեռներեցին օժտում է սեփական աշխատանքի արդյունավետության զգացումով, ուրմեն նաև ապահովում է ինքն իրենից գոհ լինելը, որն անհրաժեշտ է ցանկացած աշխատանքի համար:

Հաջողակ սոցձեռնակատերերից շատերը նախկինում հաջողակ գործարարներ են եղել: Այս առումով հաճախ օրինակ են բերում Skoll Foundation-ի հիմնադիր Ջեֆ Սկոլային: Նման մարդիկ բացի նրանից, որ վստահ են իրենց ուժերին, նաև ներմուծողների ցանց ունեն, որ և նրանց օգնում է հաջողությամբ սոցիալական խմբավորումներ ձևավորելուն և զարգացնելուն:

Կոնտեքստն իրենից ներկայացնում է ձեռնարկատիրոջ նախորդ փորձի և սոցիալական սեկտորի համագործակցության գոտին: Հենց կոնտեքստի շրջանակներում է, որ ձեռնարկատերերը ուշադրություն են դարձնում սոցիալական խնդիրներին: Ասենք՝ աղքատներին ձրի ապուր են բաժանում, շփվում են անբուժելի հիվանդությամբ տառապողների հետ և այլն: Սա նրանց օգնում է տեսնելու սոցիալական արժեքներ ստեղծելու հնարավորությունը և ձևավորելու այն առաքելությունը, որ կապված է արժեքավոր առաջարկի հետ:

Մեյերը և Նեբոն կատարել են հետևյալ քայլը՝ նրանք ստեղծել են մի մոդել, որ բացատրում է, թե սոցձեռնարկատիրոջ բարենորոգչական մղումներն ի՞նչ փաստարկներ կարող են ունենալ, օգնում է նախ նրա ընկալումների փոփոխմանը, և ապա սոցձեռնարկատիրություն ստեղծելուն:

Այս մոդելից երևում է, թե սոցձեռնարկատերը ինչպե՞ս է հանգում այն համոզմանը, թե անհրաժեշտ է, «ճշմարիտ է» և հնարավոր է սոցիալական ձեռնարկություն ստեղծել՝ բացահայտված խնդիրը լուծելու համար: Նրանց առաջնորդում է կարեկցանքը հասարակության անհրավված անդամների հանդեպ, այն, որ նրանց աղետալի վիճակը բարոյականության տեսանկյունից «ճիշտ չէ»: Հենց այս զգացումներն էլ որոշում են սոցիալական ձեռնարկություն ստեղծելու «նպատակահարմարությունը»: Ձեռներեցները հավատում են, որ հաջողությամբ կարող են հասնել իրենց նպատակներին և ստանում են նրանց աջակցությունը, ովքեր կիսում են իրենց համոզմունքները լավ ապագայի մասին: Սա ստեղծում է «իրականացման» հնարավորություն: Հենց այս գաղափարներն են, որ ձևավորում են սոցիալական ձեռնարկություն ստեղծելու մտադրությունը: Մտադրությունն էլ իր հերթին ձեռնարկատիրոջը հաջող բիզնես-մոդել ընտրելու հնարավարություն է տալիս:

Այսպիսով՝ սոցձեռնարկատիրոջն առաջնորդում են ինչպես ներքին, այնպես էլ արտաքին ուժերը: Ներքին մղումը (մոտիվացիան)

Այսպիսով՝ սոցձեռնարկատիրոջն առաջնորդում են ինչպես ներքին, այնպես էլ արտաքին ուժերը: Ներքին մղումը (մոտիվացիան) պայմանավորված է անձնական այն արժեքներով, որ կարեկցանք են առաջացնում ուրիշների դժբախտության հանդեպ ու նաև՝ սեփական ուժերի հանդեպ ունեցած վստահությամբ, որ հիմնված է փորձառության վրա: Իսկ արտաքին մղիչ ուժը ծնվում է սոցիալական խնդիրների հետ բախումից և համախոհների աջակցության հանդեպ ունեցած վստահությունից: Այս ուժերն են, որ իրենց ամբողջության մեջ սոցիալական ձեռնարկատիրոջ համար խթան են հանդիսանում:

ԻՆՉ ԵՆ ԱՍՈՒՄ ՈԼՈՐՏԻ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԸ՝ ՍՈՒՐԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ

Սուրեն Մխիթարյան

- Ձեզ դիմում եմ ոչ թե որպես ՍՁ ծրագրի ղեկավար, այլ որպես այս բնագավառում կատարված աշխատանքի փորձագետ: Ե՞րբ հասկացաք որ եկել է Հայաստանում Սոցիալական Ձեռներեցությունը զարգացնելու ժամանակը:

- ՍՁ-ն որպես այդպիսին աշխարհում վաղուց է ձևավորվել, բայց ըստ էության այն դեռևս նոր, թարմ երևույթ է, որպես կատեգորիա ընդամենը 20-30 տարվա պատմություն ունի: Սկզբնական շրջանում սրա իրականացումն անհավանական էր թվում, սակայն հիմա համաշխարհային մակարդակով այս բնագավառում արդեն որոշակի հաջողություններ են գրանցվել, ձեռք բերված փորձն սկսել է տարածվել, և ահա արդեն հասել է Հայաստան:

- Կարելի՞ է ասել, որ Սոցիալական ձեռնակատիրության գաղափարն ի սկզբանե եղել է գործարարության հիմքում: Չէ՞ որ հենց հայազգի մոնոպոլիստներից շատերը հասկացել են՝ եթե հասարակությունը բարեկարգ վիճակում է, դա լավ է նաև իրենց համար: Բայց ՍՁ և ավանդական ձեռնարկատիրությունները սկզբունքով կարծես թե տարանջատվում են միմյանցից: Ձեր կարծիքով սրանցից որի՞ն է ապագան:

- Սկսեմ ավանդականից, որի հիմնական նպատակը հենց սեփական շահի ապահովումն է, երբ ձեռնարկտերն ուզում է նվազագույն ծախսերով մեծ շահույթ ապահովել: Իրականում գործարարը, եթե ուզում է հաջողակ լինել, ամեն դեպքում լուծում է հասարակության որոշ խնդիրներ, բայց շատ անգամ, ինչպես փորձը ցույց է տալիս, հիմքում ընկած է լինում անձնական շահը, և նրա համար կարևոր չէ շրջակա միջավայրին չվնասելը, ուրիշների շահը չանտեսելը: Իսկ ՍՁ-ն ուղղակի ուզում է օրինավոր հասարակություն ստեղծել և ապրել դրա մեջ՝ ապահովելով նաև իր և իր ընտանիքի ապրուստը: ՍՁ գործունեությունն ուղղված է սոցիալապես խոցելի համայնքներին, խավերին, հասարակական այն խնդիրներին, որ լուծում են պահանջում: Այս պարագայում ՍՁ-ն փորձում է նոր լուծումներ առաջարկել և իր առաջ խնդիր է դնում դրանք իրականացնելը: Իմ կարծիքով սա հենց ձեռնարկատիրության ապագան է: Ինչ խոսք, սա բիզնեսի ավելի բարձր մակարդակ է: Երբ ձեռներեցն սկսում է մտածել իր երկրի, իր քաղաքի, գյուղի մասին, սա ենթադրում է նաև հասարակական գիտակցության բարձրացում: Բիզնես ոլորտն սկսում է այլ դիտանկյունից նայել աշխարհին: Մարդիկ տեսնելով, որ ձեռնակատերն ավելի շատ ոչ թե իր, այլ ընդհանուրի շահերի մասին է մտահոգվում, և այսպիսի միջավայրում ապրելն ավելի լավ է, իրենք էլ կնպաստեն նրա հաջողությանը, ավանդական ձեռնարկատիրությունը՝ որպես այդպիսին, կվերանա:

- Ո՞րն է ձեր ծրագրի խնդիրը: Ինչպե՞ս եք նպաստելու Հայաստանում ՍՁ զարգացմանը:

- Ծրագիրը մեկնարկել է 2015թ.-ից: Ինչպես սրանով զբաղվող մյուս կազմակերպությունները, մերը նույնպես ուղղված է համայնքների՝ հատկապես խոցելի համայնքների զարգացմանը: Մենք հանդես ենք գալիս որպես այս ծրագրի զարգացման գործիք: Առաջին հաջողությունը, իմ կարծիքով համայնքներին, բնակիչներին համախմբելն էր: Մարդիկ սկսեցին միմյանց հետ շփվել, համաձայնության գալ, հասկացան, որ իրենց շահերը հիմնականում համընկնում են, կարող են համատեղ գործունեություն ծավալել: Համագործակցության մշակույթը, որ երևի թե սովետական ժամանակներից ետընթաց էր ապրել ու գրեթե բացակայում էր, նկատելիորեն փոխվում է դեպի լավը: Համայնքների բնակչությունն ավելի պատրաստակամ է դարձել, համագործակցում են ծրագրի թիմի հետ, նույնիսկ անշահախնդիր աջակցություն են ցուցաբերում: Մեր երկրորդ հաջողությունն այն է, որ արտագնա աշխատանքից հրաժարվողների մի զգալի զանգված է ձևավորվել: Նրանք պատրաստ են ՍՁ-ն սատարելով, մնալ, բարելավել իրենց համայնքի վիճակը: Մենք աջակցում ենք ոչ միայն խորհրդատվությամբ, այլ նաև ֆինանսապես: Իհարկե, քարոզչությունը կարևոր դեր ունի, բայց այն պետք է խելամտորեն կիրառել՝ ըստ հանգամանքների և ձեռք բերված փորձի փոփոխել մոտեցումները, մանավանդ որ ՍՁ գաղափարի ճշգրտված սահմանումներ դեռ չկան աշխարհում: Հենց Հայաստանի տարբեր համայնքներում տարբեր է մեր աշխատանքի բնույթը՝ կապված համայնքի կարիքների հետ: Մեր կարևոր նպատակներից մեկն այն է, որ մարդիկ իրենք քննարկեն իրենց գործերը, բանավիճեն և տարբեր առաջարկներով հանդես գան, տարածեն ՍՁ գաղափարը և իրենց ձեռք բերած փորձը: Իսկ դա կարելի է անել տեղեկատվական միջոցների, պետական կառույցների հետ համագործակցելով: Ուրախալի էր տեսնել, որ թե՛ պետական, թե՛ ինքնակառավարման, թե՛ հասարակական, միջազգային մի շարք կառույցներ որքան մեծ հետաքրքրություն են ցուցաբերում: Սխալ է այն պատկերացումը, թե Հայաստանում պետական կառույցները դռները փակ են պահում ամեն տեսակի նորամուծությունների առաջ: Օրինակ, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Զբաղվածության կենտրոնը մեզ փորձագետներ, նյութեր տրամադրեց, Տարածքային կառավարման և զարգացման նախարարի՝ Դավիթ Լոբյանի կողմից ընդունելություն եղավ: Նա ասաց, որ իրենց շատ է հետաքրքրում ՍՁ գաղափարը, և ինքը անպայման կաջակցի, երբ մենք արդեն որոշակի արդյունքներով ներկայանանք: Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը ցանկություն հայտնեց ՍՁ-ն զարգացնել հենց երիտասարդության շրջանում և նրանց միջոցով: Կրթության և գիտության նախարարը հրավիրել է մեզ զրույցի: Այս հանդիպումից հասկացանք, որ խիստ կարևորվում է դպրոցներում ձեռնարկատիրության և այդ թվում նաև սոցիալական ձեռնարկատիրության գիտելիքներ տալու հարցը:

- Ի՞նչ կոնկրետ նախադրյալներ եք տեսնում մեր երկրում:

- Քանի որ Հայաստանում խիստ արտահայտված են մի շարք սոցիալական խնդիրներ, շատերը ստիպված են լինում հեռանալ երկրից: Հաջողության գրավական կարող է լինել այն, որ, Հայաստանը որպես լաբորատորիա դիտվի, որտեղ կարելի է ուսումնասիրել, թե ՍՁ-ն ինչպե՞ս է գործում: Քանի որ սա փոքր երկիր է, թե՛ տարածքով, թե՛ բնակչության թվով, արդյունքները շատ ավելի շուտ կարող են երևալ:

Համայնքապետարաններ
Հայաստանի Հանրապետությունում համայնքապետարաններն իրավասու են Սոցիալական Ձեռնարկատիրությանն աջակցելու հետևյալ միջոցներով՝ դրամաշնորհներ, խորհրդատվություն, ուսուցում, արտոնյալ վարկավորում և այլն: Դրամաշնորհ ստանալու համար սոցձեռնարկատերը պետք է մեկ տարի առաջ դիմի համայնքապետարանին: Դրամաշնորհը պետք է հաստատվի տվյալ ոլորտի ավագանու հանձնաժողովի կողմից, վավերացվի տարեկան (հաջորդ տարվա) բյուջեով:

Դրամաշնորհը կարող է լինել ինչպես միջոցառման, կրթության զարգացման ծրագրերի, այնպես էլ փոխայցերի, ֆինանսավորման տեսքով: Դիմումը ներկայացվում է քաղաքապետին ուղղված նամակով: Խրախուսվում է հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությունը դրամաշնորհներին: Ֆինանսավորելիս առավելությունը տրվում է սոցիալական խնդիրներ լուծողներին և ենթակառուցվածքներ ստեղծողներին: Համայնքապետարանը կարող է ապահովել նաև մասնագետների ներգրավումը (կեցություն, եթե հյուրընկալություն է)՝ տարբեր ծրագրերի մասնակցության նպատակով: Կառույցը կարող է նաև ապահովել տեղում և հանրապետության սահմաններում բեռների և ուղևորների տեղափոխումներ՝ մեկնել-վերադառնալու տարբերակով: Դիմումը ներկայացվում է քաղաքապետին ուղղված նամակով: Հողի կամ տարածքի հատկացման համար հարկ է դիմել քաղաքապետին կամ ավագանուն, որից հետո կատարվում է հողահատկացումը և հաստատվում է ավագանու կողմից: Հաշմանդամություն ունեցողներին օժանդակում են կենսապայմանների բարելավման փոքր ծրագրերով, որի համար պետք է նամակով դիմել քաղաքապետին:

Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն (www.smednc.am)
Հայաստանի Փոքր և Միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն հիմնադրամը ՀՀ կառավարության կողմից ստեղծվել է 2002 թվականին: Հայաստանի ՓՄՁ զարգացման ազգային կենտրոնի կառավարման գլխավոր մարմինը ՀՀ Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի գլխավորած Հոգաբարձուների խորհուրդն է: ՓՄՁ զարգացման ազգային կենտրոնի գործունեությունն իրականացվում է ՀՀ ամբողջ տարածքում գործող մարզային մասնաճյուղերի և ներկայացուցչությունների լայն ցանցի միջոցով:

Հայաստանի ՓՄՁ զարգացման ազգային կենտրոնի գործունեությունն ուղղված է.
- Պետական կառույցների և ՓՄՁ-ների միջև կապի հաստատմանը,
- ՓՄՁ-ների գործունեության արդյունավետության և մրցունակության բարձրացմանը,
- ՓՄՁ-ների համար բիզնեսի զարգացման ծառայությունների մատչելիության ապահովմանը,
- ՓՄՁ-ների համար ֆինանսական ռեսուրսների հասանելիության ապահովմանը,
- Նորարարական, հետազոտական և զարգացման ծրագրերի իրականացմանն աջակցելուն,
- Նոր ՓՄՁ-ների ստեղծմանն աջակցելուն, ՓՄՁ-ների գործունեության միջազգայնացմանը :

ԾՐԱԳՐԻ ԿՈՆՍՈՐՑԻՈՒՄ

ՄԻՋՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

ՄԻՋՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՈՒՍՈՒՑՄԱՆ և ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

ԿԱՋԱ - ՇՎԵՅՑԱՐԱԿԱՆ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀՀ ԱՌԱՏՐԱԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՊԱԼԱՏ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՄԲ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՍՈՑԱՑԻԱ

ԿԱՊ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Ամսաթերթի բովանդակության հետ կապված հարցերով, դիտողություններովի կամ առաջարկություններով խնդրում ենք դիմել մեզ հետ հետևյալ կոնտակտային տվյալներով:
Ուրախ կլինենք հետագա համարների համար ստանալով Ձեր նյութերը, առաջարկները և ուղղորդումները:

Հեռ. +374 94 054422
Էլ.փոստ news@se.center

European Commission

Austrian Development Cooperation

Սույն ամսաթերթի նյութերի բովանդակությունը գտնվում է միմիայն <<Միջմշակութային ուսումնասիրությունների, ուսուցման և երկխոսության միջազգային կենտրոն>> հասարակական կազմակերպության պատասխանատվության տակ, և կարող է չհամընկնել Եվրոպական միության կամ Ավստրիական զարգացման գործակալության տեսակետների հետ:

Ամսաթերթի հրապարակումն իրականացվում է Եվրոպական Միության պատվիրակության և Ավստրիական զարգացման գործակալության կողմից ֆինանսավորված «Համայնքային զարգացումը սոցիալական ձեռներեցության միջոցով» ծրագրի շրջանակներում: